ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 14-ը շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Աննա Մազմանյանի՝ Գլազգո (Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Աննա Մազմանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Գլազգո (Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն)
   2021թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 14-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի քարտուղարություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն՝ ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի կողմերի 26-րդ համաժողովին (COP-26)՝ ներառյալ Նախագահական ծրագրով նախատեսված մի շարք միջոցառումներին, մի շարք երկրների շրջակա միջավայրի ոլորտի համապատասխան գերատեսչությունների և մի շարք միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ երկկողմ հանդիպումներին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   - Փորձի փոխանակման և հետագա համագործակցության վերաբերյալ հարցեր շրջակա միջավայրի կառավարման, մասնավորապես՝ բնության հատուկ պահպանվող տարածքների կայուն կառավարման, անտառների, կեղտաջրերի, թափոնների, ջրային ռեսուրսների կառավարման ոլորտներում,
   - կլիմայի փոփոխության ազդեցությունը բնության և մշակութային ժառանգության վրա,
   - էներգաարդյունավետության բարձրացում և վերականգնվող էներգիայի զարգացում,
   - Սևանա լճի էկոհամակարգի բարելավում,
   - կանաչ տնտեսություն, կանաչ աշխատատեղեր,

- կլիմայի փոփոխության ազդեցությունը հողերի դեգրադացիայի և գյուղատնտեսության վրա,
- զրոյական և ցածր արտանետումներով տրանսպորտ:

7. <u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ</u>

- **Հանդիպում Վրաստանի բնապահպանության և գյուղատնտեսության փոխնախարար Նինո Թանդիլաշվիլիի հետ**

  Կողմերը քննարկել են սահմանամերձ համայնքներում անտառահատումների և անտառային ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացմանը վերաբերող հարցեր, կենսաբազմազանության ուժեղացված պահպանության, մոնիթորինգի և կայուն օտագործման խնդիրներ և ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման ու կառավարման հարցեր, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման վրացական փորձը: Աննա մազմանյանը մասնավորապես անդրադարձել է ՇՄՆ «Արփի լիճ» ազգային պարկի գործունեությանը, լճի և հարակից պահպանվող տարածքի էկոհամակարգի անխաթարության պահպանությանը: Փոխնախարարը ընդգծել է երկու երկրների միջև փորձի փոխանակման կարևորությունը և շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ մասնագիտական հանդիպումներ կազմակերպելու պատրաստակամություն հայտնել:

- **Ելույթ՝ հունական կողմի նախաձեռնությամբ «Կլիմայի փոփոխության ազդեցությունը բնության և մշակութային ժառանգության վրա» թեմայով միջոցառմանը**

  Հունական կողմի նախաձեռնությամբ կազմակերպված միջոցառմանը Աննա Մազմանյանը խոսել է Հայաստանում կլիմայի փոփոխության բացասական հետևանքների մասին, մասնավորապես՝ անդրադարձել Սևանա լճի էկոհամակարգի վրա կլիմայի փոփոխության բացասական հետևանքներին: Փոխնախարարը անդրադարձել է Ադրբեջանի կողմից սանձազերծված 44-օրյա պատերազմի ընթացքում հասցված բնապահպանական աղետներին և կարևորել միջազգային հանրության արձագանքը այս աղետալի երևույթին:

- **Հանդիպում Կանաչ Կլիմայի հիմնադրամի գործադիր տնօրենի առաջին տեղակալ Խավիեր Մանզանարեսի հետ**

  Աննա Մազմանյանը կարևորել է Կանաչ Կլիմայի հիմնադրամի և Հայաստանի միջև երկկողմ համագործակցության ընդլայնումը և այս համատեքստում ընդգծել է հատկապես սերտ համագործակցության կարևորությունը իրականացվող ծրագրերի ֆինանսավորումն

ապահովելու համար: Քննարկվել են Կանաչ կլիմայի հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերը, և 2022 թվականի համար Հայաստանը սահմանել է ոլորտում իր առաջնահերթությունը և որպես առաջարկ ներկայացրել հիմնադրամին, այն է՝ էլեկտրոնային թափոնների կառավարումը: Կանաչ կլիմայի հիմնադրամի գործադիր տնօրենի առաջին տեղակալն իր պատրաստակամությունն է հայտնել նպաստել հիմնադրամի և Հայաստանի շարունակական համագործակցության խորացմանը՝ ընդգծելով նաև «ԿԿՀ-Հայաստան համագործակցության ազգային ծրագրի» կարևորությունը:

- **Հանդիպում Լեհաստանի Կլիմայի էներգետիկայի միազգային համագործակցության հատուկ հանձնակատար Սեբաստիան Բարկովսկիի հետ**

  Աննա Մազմանյանը խոսել է ազգային մակարդակով սահմանված գործողությունների վերաբերյալ, մասնավորապես՝ էլեկտրական շարժունակության (e-mobility) խթանման, ազգային մակարդակով սահմանված գործողությունների գործընկերության պլանի իրականացման, օդի որակի բարելավման, էներգաարդյունավետության բարձրացման, անտառապատ տարածքների ավելացման վերաբերյալ: Ընդգծվել է համայնքներում էներգաարդյունավետության բարձրացման և վերականգնվող էներգիայի զարգացման անհրաժեշտությունը: Աննա Մազմանյանը անդրադարձել է կեղտաջրերի և կոշտ թափոնների կառավարման խնդրին և նշել, որ Հայաստանն այդ խնդրին լուծումներ գտնելու նպատակով խորհրդատվության և միջազգային փորձի փոխանակման կարիք ունի: Պարոն Բարկովսկին խոսել է Լեհաստանի պատրաստակամության մասին՝ աջակցել ԵՄ հարևան երկրներին կլիմայի փոփոխության դեմ պայքարում: Ներկայացվել է Լեհաստանի Կլիմայի աջակցության նախաձեռնությունը և ընդգծվել, որ նախաձեռնության շրջանակներում Լեհաստանը պատրաստ է ներդրումային և խորհրդատվական ծրագրերի միջոցով 11,25 մլն եվրոյի սահմաններում աջակցել ԵՄ հարևան երկրներին, այդ թվում և Հայաստանին՝ կլիմայական քաղաքականության մշակման, օդի որակի բարելավման, շենքերի էներգաարդյունավետության, զրոյական և ցածր արտանետումներով տրանսպորտի ուղություններով:

- **Հանդիպում Ազգային մակարդակով սահմանված գործողությունների (ԱՍԳ) գործընկերության աջակցման գրասենյակի տնօրենի տեղակալ Ռոմեո Բերտոլինիի ղեկավարած պատվիրակության հետ**

  Աննա Մազմանյանը կարևորել է Հայաստանում Ազգային մակարդակով սահմանված գործողությունների գործընկերության աջակցման գրասենյակի ներգրավվածությունը Փարիզյան համաձայնագրի պահանջների և դրույթների կատարման հարցում: Փոխնախարարը ներկայացրել է ԱՍԳ գործընկերության պլանի իրականացման ընթացիկ վիճակը, ինչպես նաև շեշտել Կառավարության

առաջնահերթություններին պլանի իրականացման հետագա համապատասխանեցման կարևորությունը: Ընդգծվել է ԱՍԳ գործընկերության աջակցման գրասենյակի կողմից աջակցվող Գործընկերական ծրագրին համահունչ երկրի կարիքների ձևակերպման հնարավորությունը: Մեծ Բրիտանիայի և Ֆիջիի համանախագահությամբ իրականացվող Կլիմայական ֆինանսավորման հասանելիության մասին աշխատանքային խմբին միանալու հարցի քննարկման առաջարկ է արվել Հայաստանին՝ 100 միլիոն ֆունտ ստեռլինգի չափով նոր ֆինանսավորման պարտավորություն Միացյալ Թագավորության կողմից՝ կլիմայական ներդրումների ապահովման բյուրոկրատիայի վերաբերյալ խնդիրների բախվող երկրների համար:

- **Հանդիպում Կոստա Ռիկայի շրջակա միջավայրի և էներգետիկայի փոխնախարար Սինթիա Բարզունայի հետ**

Գործընկերները քննարկել են ոլորտին առնչվող խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ իրականացվող ծրագրերի փորձի փոխանակման հնարավորությունը: Աննա Մազմանյանը խոսել է «10 մլն ծառ» նախաձեռնության մասին, ներկայացրել Հայաստանի հավակնոտ ծրագրերը անտառապատ տարածքների կրկնապատկման նպատակով, ինչպես նաև ընդգծել է տնկարանների ստեղծման կարևորության մասին: Փոխնախարարը առաջարկել է կազմակերպել փորձի փոխանակում էկոզբոսաշրջության և անտառվերականգնման ոլորտում՝ հաշվի առնելով Կոստա Ռիկայի հարուստ փորձը:

- **Հանդիպում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի ներկայացուցիչների հետ**

Կողմերը քննարկել են ոլորտի առաջնահերթությունները և հնարավոր համագործակցության շրջանակը: Աննա Մազմանյանը շնորհակալություն է հայտնել ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակին՝ Հայաստանում պարենային անվտանգությանն առնչվող ծրագրերի իրականացման ուղղությամբ տարվող աշխատանքի համար և կարևորել գործունեության շրջանակի ընդլայնումը:

- **Ելույթ՝ Ասիական զարգացման բանկի կողմից կազմակերպված «Հետհամաճարակային իրավիճակում կանաչ, դիմակայուն վերականգնման ֆինանսավորում» միջոցառման շրջանակներում**

Ելույթի ընթացքում Աննա Մազմանյանը ներկայացրել է Հայաստանի կլիմայական քաղաքականության օրակարգը և ընդգծել, որ Կառավարության 2021-2026թթ. ծրագրում կարևորվում է կանաչ տնտեսության զարգացման և կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ուղղությամբ տարվող քայլերը: Փոխնախարարը խոսել է «10 մլն ծառ» նախաձեռնության մասին՝ կարևորելով վերջինիս դերը անտառվերականգնման հարցում: Աննա Մազմանյանը շեշտել է ֆինանսական ռեսուրսների հավաքագրման դերը

կլիմայի փոփոխության դեմ պայքարի հարցում: Ընդգծվել է ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի շրջանակներում Հայաստանի համագործակցությունը միջազգային գործընկերների և ոչ պետական հատվածի գործընկերների հետ:

- **Հանդիպում Ինդոնեզիայի պատվիրակության հետ**

Հանդիպման ընթացքում հայաստանյան պատվիրակության ներկայացուցիչներն Ինդոնեզիայի շրջակա միջավայրի և անտառային տնտեսության նախարարության գործընկերների հետ քննարկել են երկրների առջև ծառացած մի շարք բնապահպանական խնդիրներ: Անդրադարձ է կատարվել Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներին, անտառային և ջրային ռեսուրսներին: Հաշվի առնելով Ինդոնեզիայի հետաքրքիր փորձը՝ Աննա Մազմանյանը գործընկերներին տեղեկացրել է, որ Հայաստանը հետաքրքրված է անտառամերձ համայնքների բնակչության զբաղվածության և սոցիալական խնդիրները լուծելու և դրանով իսկ բնության վրա ճնշումը մեղմելու միջազգային գործիքակազմով: Փոխնախարարը կարևորել է վերոնշյալ ոլորտներում փորձի փոխանակումը և հանդես եկել «միասնական ազգային պարկ» նախագիծ իրականացնելու առաջարկով:

- **Հանդիպում Քուվեյթի պատվիրակության հետ**

Կողմերը ներկայացրել են երկու երկրներում թափոնների կառավարման փորձը և խնդիրները: Աննա Մազմանյանը ընդգծել է Հայաստանում թափոններից էներգիա ստանալու գաղափարի կարևորությունը: Քուվեյթի պատվիրակությունը շեշտել է համագործակցության հնարավորությունը թափոնների կառավարման և վերականգնվող էներգետիկայի ոլորտներում:

- **Հանդիպում Եվրոպական ներդրումային բանկի հետ**

Աննա Մազմանյանը ներկայացրել է Հայաստանում թափոնների կառավարման փորձը: Քննարկվել է այս ուղղությամբ հետագա հնարավոր համագործակցությունը:

- **Հանդիպում ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի Բնական ռեսուրսների կոմիտեի նախագահ Լաուրա Ֆրիդմանի հետ**

Քննարկվել են անտառային հրդեհներին առնչվող, ինչպես նաև ջրային ռեսուրսների կառավարման հետ կապված հարցեր: Առաջարկվել է փորձի փոխանակում շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի և ԱՄՆ համապատասխան կազմակերպության միջև:

- **Մի շարք ոչ պաշտոնական հանդիպումներ՝ Լիբանանի պատվիրակության ղեկավարի տեղակալի, Չիլիի հանքարդյունաբերության նախարարի և Իրանի պատվիրակության,**

Հարավային Ասիայի համագործակցային բնապահպանական ծրագրի ներկայացուցիչների հետ

Քննարկվել են հետագա համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

11/18/2021

X

ԱՆՆԱ ՄԱԶՄԱՆՅԱՆ

Signed by: MAZMANYAN ANNA 5308800774

Աննա Մազմանյան

17.11.2021թ.